**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
N ԳՀԾՁԲ-20-20/5-1

ք. Երևան 30.04.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Դաrեu» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Քոսակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 32000000 (երեսուներկու միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ=46900000.

ՆԳ=62932150.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը

հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչությունը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Դարես» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, ք. Երևան, Գալշոյան 36 |
| ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 1570023676110100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02624964 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ | Տնօրեն |
| Ն. ՅՈՒԼՀԶՅԱՆ | Ն. ՔՈՍԱԿՅԱՆ |

«ԴԱՐԵՍ» "DARES" "ДАРЕС" 02624964

**Հավելված N 1**
N ԳՀԾՁԲ-20-20/5-1 **պայմանագրի**

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Գնման առարկայի | | |
|---|---|---|
| **h/h** | **անվանումը** | **տեխնիկական բնութագիրը** |
| 1 | Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ (ինժեներական տեխնիկայի վերանորոգման ծառայության ձեռքբերում), այդ թվում՝ Էքսկավատորների վերանորոգման ծառայություններ | Վերանորոգումն ըստ էքսկավատոր արտադրող ձեռնարկության տեխնիկական բնութագրի |

**Ծանոթություն՝** Հիմնական նորոգում անցած շարժիչները և փոխանցման տուփերը պետք է կապարակնքվեն ընկերության կողմից և տրվեն 500մ/ժ կամ 1 տարի երաշխիքային շահագործման ժամկետներ (որը գործում է մինչև պայմաններից մեկի ավարտը),

հիմնական նորոգում անցած ագրեգատներին տրված երաշխիքային ժամկետները գործելու են վերանորոգման ընկերության կողմից հաստատված երաշխիքային գրքույկներում նշված ցուցանիշների պահպանման դեպքում,

վերանորոգման ենթակա տեխնիկան տրամադրվում է ՀՀ ԶՈՒ ԻԶՎ-ի կողմից (տեղափոխումը ՀՀ տարածքում մինչև ընկերություն),

փոխարինված ագրեգատները և պահեստամասերը (բացառությամբ արագամաշ պահեստամասերի) պետք է հանձնվեն ՀՀ ՊՆ թիվ 13516 զորամասի պահեստ (ք.Էջմիածին Իսիլե-Մուլինոյի 7)

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման առարկայի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **h/h** | **անվանումը** | **չ/մ** | **քանակը** | **առավելագույն գումարը (ՀՀ դրամ)** | **մատուցումը 2020թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝** | |
| | | | | | **3-րդ եռամսյակ** | **4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 30.10.2020թ.** |
| 1 | Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ (ինժեներական տեխնիկայի վերանորոգման ծառայության ձեռքբերում), այդ թվում՝ Էքսկավատորների վերանորոգման ծառայություններ | դրամ | 1 | 32000000 | 26000000 | 6000000 |

**Ծանոթություն՝** Ծառայությունների մատուցումը իրականացվելու է 2020թ. ընթացքում, ըստ ՀՀ ԶՈՒ ԻԶՎ կողմից ներկայացված հայտերի

Վերանորոգման ծառայություններն իրականացնելիս պահեստամասերը կարող է տրամադրվել ՀՀ ԶՈՒ ԻԶ վարչության կողմից:

**Հավելված N 2**
N ԳՀԾՁԲ-20-20/5-1 **պայմանագրի**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **h/h** | **անվանումը** | **CPV կոդը** | **հուլիս** | **օգոստոս** | **սեպտեմբեր** | **հոկտեմբեր** | **նոյեմբեր** | **դեկտեմբեր** |
| 1 | Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ (հատուկ ինժեներական տեխնիկայի վերանորոգման ծառայության ձեռքբերում), այդ թվում՝ Բուլդոզեր S-170, S-130, Բ-10, S-10 տեխնիկաների վերանորոգման ծառայություններ | 50531100/5 | 26000000 | 26000000 | 26000000 | 32000000 | 32000000 | 32000000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ | «Դարես» ՍՊԸ տնօրեն |
| Ն. ՅՈՒՂՋՅԱՆ | Ն. ՔՈՍԱԿՅԱՆ |

**Հավելված N 1.1**
N ԳՀԾՁԲ-20-20/5-1 **պայմանագրի**

| Էքսկավատորների նորոգման ծառայություններ | | | |
|---|---|---|---|
| Ծառայությունների մատուցման բացվածքը ըստ կատարվող աշխատանքների և միավորի գների | | | |
| Հ/հ | Ծառայության անվանումը | Չ/մ | Միավորի գինը (ՀՀ դրամ) |
| 1 | Շարժիչի հանում | հատ | 50000 |
| 2 | Շարժիչի տեղադրում | հատ | 50000 |
| 3 | Շարժիչի քանդում և արատավորում | հատ | 100000 |
| 4 | Շարժիչի բլոկի ստենդային ստուգում | հատ | 20000 |
| 5 | Շարժիչի բլոկի ներտաշում | հատ | 40000 |
| 6 | Շարժիչի բլոկի վերանորոգում | հատ | 35000 |
| 7 | Շարժիչի բլոկի մաքրում և ներկում | հատ | 22000 |
| 8 | Շարժիչի բլոկի փոխարինում | հատ | 8000 |
| 9 | Շարժիչի /առանց բլոկի/ մասերի մաքրում | հատ | 15000 |
| 10 | Շարժիչի հավաքում | հատ | 60000 |
| 11 | Շարժիչի ռեզինոտեխնիկական պատրաստվածքների փոխարինում | հատ | 4000 |
| 12 | Շարժիչի 1 կոմպլեկտ գլանի, մխոցի, մխոցամատի, մխոցային օղերի փոխարինում | հատ | 5000 |
| 13 | Շարժիչի շարժաթևի փոխարինում /շարժիչն հանված/ | հատ | 2000 |
| 14 | Շարժիչի շարժաթևի ականոցի փոխարինում /շարժիչն հանված/ | հատ | 6000 |
| 15 | Շարժիչի ջրի պոմպի ստենդավորում | հատ | 9000 |
| 16 | Շարժիչի ջրի պոմպի վերանորոգում | հատ | 10000 |
| 17 | Շարժիչի գլխիկի կափարիչի ապամոնտաժում և մոնտաժում | հատ | 800 |
| 18 | Շարժիչի գլխիկի կափարիչի ամրացման հեղույսի փոխարինում | հատ | 200 |
| 19 | Շարժիչի գլխիկի փոխարինում | հատ | 5000 |
| 20 | Շարժիչի գլխիկի վերանորոգում | հատ | 40000 |
| 21 | Շարժիչի գլխիկի արտածման փականի փոխարինում | հատ | 700 |
| 22 | Շարժիչի գլխիկի ներածման փականի փոխարինում | հատ | 700 |
| 23 | Շարժիչի գլխիկի փականի լծակի փոխարինում | հատ | 700 |
| 24 | Շարժիչի գլխիկի փականի արտաքին զսպանի փոխարինում | հատ | 200 |
| 25 | Շարժիչի գլխիկի փականի ներքին զսպանի փոխարինում | հատ | 200 |
| 26 | Շարժիչի գլխիկի ամրացման մանեկի փոխարինում | հատ | 200 |
| 27 | Շարժիչի գլխիկի ամրացման գամասեղի փոխարինում | հատ | 1000 |
| 28 | Շարժիչի բաշխիչ լիսեռի փոխարինում | հատ | 6000 |
| 29 | Շարժիչի ծնկաձև լիսեռի ստուգում | հատ | 8000 |
| 30 | Շարժիչի ծնկաձև լիսեռի ողորկում | հատ | 10000 |
| 31 | Շարժիչի ծնկաձև լիսեռի հղկում | հատ | 20000 |
| 32 | Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում | հատ | 2000 |
| 33 | Շարժիչի ներթողման կոլեկտորի փոխարինում | հատ | 2500 |
| 34 | Շարժիչի ներածող կոլեկտորի միացման խողովակաոստի փոխարինում | հատ | 2000 |
| 35 | Թափանիվի փոխարինում | հատ | 6000 |
| 36 | Թափանիվի ատամնավոր օղագոտու փոխարինում | հատ | 4000 |
| 37 | Շարժիչի թափանիվի քարտերի փոխարինում | հատ | 5000 |
| 38 | Շարժիչի քարտերի փոխարինում | հատ | 5000 |
| 39 | Շարժիչի ջրի զտիչի փոխարինում | հատ | 500 |
| 40 | Ջրի ռադիատորի փոխարինում | հատ | 7000 |
| 41 | Շարժիչի ջրի մակարդակի ցուցիչի փոխարինում | հատ | 200 |
| 42 | Շարժիչի փոկի փոխարինում | հատ | 500 |
| 43 | Շարժիչի փորձարկման ծառայություն | հատ | 30000 |
| 44 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում | հատ | 8000 |
| 45 | Վառելիքի բաքի վերանորոգում | հատ | 15000 |
| 46 | Վառելիքի բաքի ամրացման բարձակի փոխարինում | հատ | 1000 |
| 47 | Վառելիքի բաքի ամրացման միջադիրի փոխարինում | հատ | 1500 |
| 48 | Վառելիքի բաքի ամրացման ամրակապի փոխարինում | հատ | 1500 |
| 49 | Վառելիքի բաքի մաքրում և ներկում | հատ | 5000 |
| 50 | Վառելիքի խողովակաշարերի փոխարինում | հատ | 12000 |
| 51 | Վառելիքի առբերման խողովակի փոխարինում | հատ | 700 |
| 52 | Վառելիքի հեռացման խողովակի փոխարինում | հատ | 700 |
| 53 | Վառելիքի բարձր ճնշման խողովակի փոխարինում | հատ | 700 |
| 54 | Ցամաքուրդային խողովակի փոխարինում | հատ | 700 |
| 55 | Տարաթողման փականի փոխարինում | հատ | 300 |
| 56 | Վերջնամաքրման վառելիքի զտիչի փոխարինում | հատ | 500 |
| 57 | Վերջնամաքրման վառելիքի զտիչի թասակի փոխարինում | հատ | 300 |
| 58 | Վերջնամաքրման վառելիքի զտիչի կափարիչի փոխարինում | հատ | 500 |
| 59 | Վերջնամաքրման վառելիքի զտիչի էլեմենտի փոխարինում | հատ | 800 |
| 60 | Ցածր ճնշման վառելիքի պոմպի վերանորոգում | հատ | 1000 |
| 61 | Ցածր ճնշման վառելիքի պոմպի փոխարինում | հատ | 1000 |

| | | | |
|---|---|---|---|
| 62 | ԲՃՎՄ-ի հանում և տեղադրում | հատ | 8000 |
| 63 | ԲՃՎՄ-ի ստենդային ստուգում, կարգավորում | հատ | 15000 |
| 64 | ԲՃՎՄ-ի քանդում, հանգույցների, դետալների մաքրում, լվացում և հավաքում | հատ | 8000 |
| 65 | ԲՃՎՄ-ի ընթացիկ նորոգում | հատ | 12000 |
| 66 | ԲՃՎՄ-ի հիմնական նորոգում | հատ | 20000 |
| 67 | Բոցամուղի ստենդային ստուգում և կարգավորում | հատ | 1500 |
| 68 | Բոցամուղի փոխարինում | հատ | 1000 |
| 69 | Բոցամուղի փոշարարի փոխարինում | հատ | 1000 |
| 70 | ԲՃՎՄ-ի շարժաբերի փոխարինում | հատ | 2000 |
| 71 | ԲՃՎՄ-ի շարժաբերի փոխարինում /հանված ԲՃՎՄ/ | հատ | 2000 |
| 72 | ԲՃՎՄ-ի կցորդիչի փոխարինում | հատ | 500 |
| 73 | ԲՃՎՄ-ի կցորդիչի փոխարինում /հանված ԲՃՎՄ/ | հատ | 4500 |
| 74 | Վառելիքի պոմպի հանում, տեղադրում | հատ | 4000 |
| 75 | Վառելիքի պոմպի վերանորոգման ծառայություն | հատ | 1500 |
| 76 | Օդի ընդունման խողովակի թասակի փոխարինում | հատ | 700 |
| 77 | Օդի ընդունման խողովակի փոխարինում | հատ | 900 |
| 78 | Օդատար խողովակի փոխարինում | հատ | 900 |
| 79 | Կիպարար խցուկի փոխարինում | հատ | 500 |
| 80 | Օդի զտիչի էլեմենտի փոխարինում | հատ | 600 |
| 81 | Օդի զտիչի կորպուսի կափարիչի փոխարինում | հատ | 300 |
| 82 | Օդի զտիչի կորպուսի կափարիչի կիպարարի փոխարինում | հատ | 600 |
| 83 | Խլացուցիչի վերանորոգում | հատ | 12000 |
| 84 | Խլացուցիչի մաքրման և ներկման ծառայություն | հատ | 3000 |
| 85 | Ռադիատորի հանում և տեղադրում | հատ | 12000 |
| 86 | Ռադիատորի վերանորոգման ծառայություն | հատ | 15000 |
| 87 | Ռադիատորի կախոցի բարձիկի փոխարինում | հատ | 700 |
| 88 | Ռադիատորի կախոցի շրջանակի հանում և տեղադրում | հատ | 6000 |
| 89 | Ռադիատորի կախոցի շրջանակի վերանորոգում | հատ | 5000 |
| 90 | Հեղուկաթափ ծորակի փոխարինում | հատ | 200 |
| 91 | Շարժիչի ջրի պոմպի վերանորոգման ծառայություն | հատ | 13000 |
| 92 | Շարժիչի ջրի պոմպի փոխարինում | հատ | 3500 |
| 93 | Ջրի պոմպի փոկանիվի փոխարինում | հատ | 2500 |
| 94 | Գեներատորի հանում և տեղադրում | հատ | 15000 |
| 95 | Գեներատորի քանդում | հատ | 20000 |
| 96 | Գեներատորի քանդում, արատավորում, սպասարկում և հավաքում | հատ | 12000 |
| 97 | Մեկնարկիչի հանում և տեղադրում | հատ | 8000 |
| 98 | Մեկնարկիչի քանդում, արատավորում, և հավաքում | հատ | 15000 |
| 99 | Լարման կարգավորիչի փոխարինում | հատ | 4000 |
| 100 | Լարման կարգավորման ռելեյի փոխարինում | հատ | 8000 |
| 101 | Յուղի ճնշման տվիչի փոխարինում | հատ | 2500 |
| 102 | Ջերմաստիճանի ազդանշանի տվիչի փոխարինում | հատ | 3500 |
| 103 | Վառելիքի մակարդակի տվիչի փոխարինում | հատ | 3500 |
| 104 | Առջևի լապտերի փոխարինում | հատ | 3000 |
| 105 | Ներքին լուսավորման լուսամփոփի փոխարինում | հատ | 600 |
| 106 | Հետևի լապտերի փոխարինում | հատ | 600 |
| 107 | Պտտվող լուսարձակի փոխարինում | հատ | 500 |
| 108 | Պտտվող լուսարձակի բարձակի փոխարինում | հատ | 500 |
| 109 | Ամբողջ էլեկտրոլարերի փոխարինում | հատ | 32000 |
| 110 | Սարքերի վահանի փոխարինում | հատ | 700 |
| 111 | Ցուցիչի փոխարինում | հատ | 700 |
| 112 | Անջատիչների վահանակի փոխարինում | հատ | 6000 |
| 113 | Անջատիչի փոխարինում | հատ | 700 |
| 114 | Խցիկի հանում և տեղադրում | հատ | 35000 |
| 115 | Խցիկի քանդում, մաքրում, վերանորոգում և ներկում | հատ | 85000 |
| 116 | Խցիկի ներսի երեսապաշում | հատ | 30000 |
| 117 | Լուսարձակի վահանի փոխարինում | հատ | 1200 |
| 118 | Ապակու կիպարարի փոխարինում | հատ | 2500 |
| 119 | Ապակու փոխարինում | հատ | 2500 |
| 120 | Ընդհանուր յուղում (смазка) | հատ | 15000 |
| 121 | Յուղման պտուկի փոխարինում | հատ | 100 |
| 122 | CO-զոդում | սմ | 300 |
| 123 | Զոդում | սմ | 200 |
| 124 | Գազաեռակցումային կտրում | սմ | 200 |
| 125 | Խառատային ծառայություն /1 կտոր/ | հատ | 500 |
| 126 | Մասնագետի ծառայություն | մ/ժամ | 6000 |
| 127 | Պտտվող հիմնամասի ապամոնտաժում | հատ | 55000 |
| 128 | Պտտվող հիմնամասի մոնտաժում | հատ | 55000 |
| 129 | Պտտվող հիմնամասի վերանորոգում | հատ | 32000 |
| 130 | Տանող ռեդուկտորի ապամոնտաժում, մոնտաժում | հատ | 12000 |

| | | | |
|---|---|---|---|
| 131 | Տանող ռեդուկտորի քանդում | հատ | 8000 |
| 132 | Տանող ռեդուկտորի վերանորոգում | հատ | 19000 |
| 133 | Տանող ռեդուկտորի հավաքում | հատ | 10000 |
| 134 | Հիդրոբաշխման կոլեկտորի ապամոնտաժում, մոնտաժում | հատ | 8000 |
| 135 | Հիդրոբաշխման կոլեկտորի քանդում | հատ | 11000 |
| 136 | Հիդրոբաշխման կոլեկտորի վերանորոգում | հատ | 9000 |
| 137 | Հիդրոբաշխման կոլեկտորի հավաքում | հատ | 11000 |
| 138 | Ձգող անիվի քանդում | հատ | 7000 |
| 139 | Ձգող անիվի վերանորոգում | հատ | 15000 |
| 140 | Ձգող անիվի հավաքում | հատ | 7000 |
| 141 | Թրթուրի ապամոնտաժում | հատ | 24000 |
| 142 | Թրթուրի տեղադրում | հատ | 24000 |
| 143 | Հիդրոբաքի ապամոնտաժում | հատ | 6000 |
| 144 | Հիդրոբաքի մաքրում և ներկում | հատ | 12000 |
| 145 | Հիդրոբաքի տեղադրում | հատ | 6000 |
| 146 | Հիդրոհամակարգի զտիչների փոխարինում | հատ | 1800 |
| 147 | Գլխավոր հիդրոնասոսի ապամոնտաժում | հատ | 21000 |
| 148 | Գլխավոր հիդրոնասոսի տեղադրում | հատ | 21000 |
| 149 | Գլխավոր հիդրոնասոսի վերանորոգում | հատ | 45000 |
| 150 | Հիդրոբաշխիչի ապամոնտաժում | հատ | 7000 |
| 151 | Հիդրոբաշխիչի քանդում և արատավորում | հատ | 9000 |
| 152 | Հիդրոբաշխիչի վերանորոգում | հատ | 14000 |
| 153 | Հիդրոբաշխիչի դետալների մաքրում և ներկում | հատ | 4000 |
| 154 | Հիդրոբաշխիչի հավաքում | հատ | 14000 |
| 155 | Հիդրոբաշխիչի տեղադրում | հատ | 9000 |
| 156 | Հիդրոբաշխիչի լծակների ապամոնտաժում | հատ | 600 |
| 157 | Հիդրոբաշխիչի լծակների վերանորոգում | հատ | 1500 |
| 158 | Հիդրոբաշխիչի լծակների տեղադրում | հատ | 1500 |
| 159 | Հիդրոգլանի ապամոնտաժում | հատ | 7000 |
| 160 | Հիդրոգլանի վերանորոգում | հատ | 5000 |
| 161 | Հիդրոգլանի տեղադրում | հատ | 7000 |
| 162 | Շրջադարձային օղակի քանդում | հատ | 17000 |
| 163 | Շրջադարձային  օղակի վերանորոգում | հատ | 22000 |
| 164 | Շրջադարձային  օղակի հավաքում | հատ | 17000 |
| 165 | Պտտող  ռեդուկտորի ապամոնտաժում, մոնտաժում | հատ | 18000 |
| 166 | Պտտող ռեդուկտորի քանդում | հատ | 12000 |
| 167 | Պտտող ռեդուկտորի վերանորոգում | հատ | 16000 |
| 168 | Պտտող ռեդուկտորի հավաքում | հատ | 18000 |
| 169 | Սայլակի ապամոնտաժում | հատ | 35000 |
| 170 | Սայլակի մոնտաժում | հատ | 35000 |
| 171 | Սայլակի քանդում և արատավորում | հատ | 31000 |
| 172 | Սայլակի հավաքում | հատ | 31000 |
| 173 | Թևի ապամոնտաժում | հատ | 23000 |
| 174 | Թևի մոնտաժում | հատ | 23000 |
| 175 | Թևի  վերանորոգում | հատ | 31000 |
| 176 | Սլաքի ապամոնտաժում | հատ | 28000 |
| 177 | Սլաքի մոնտաժում | հատ | 28000 |
| 178 | Սլաքի  վերանորոգում | հատ | 38000 |
| 179 | Հիդրոսնուցման պոմպի ապամոնտաժում | հատ | 15000 |
| 180 | Հիդրոսնուցման պոմպի մոնտաժում | հատ | 15000 |
| 181 | Հիդրոսնուցման պոմպի  վերանորոգում | հատ | 60000 |
| 182 | Շերեփի ապամոնտաժում | հատ | 20000 |
| 183 | Շերեփի մոնտաժում | հատ | 20000 |
| 184 | Շերեփի   վերանորոգում | հատ | 35000 |
| 185 | Ամրաշրջանակի վերանորոգում | հատ | 70000 |
| 186 | Էքսկավատորի փորձարկումներ | հատ | 65000 |

**Էքսկավատորների նորոգման ընթացքում օգտագործվող  պահեստամասերի կատալոգային համարները և նյութերը**

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | պ/մաս | 4121Б.14.00.000 | լրակազմ | 650000 |
| 2 | պ/մաս | 4121.01.00.018 | հատ | 22000 |
| 3 | պ/մաս | 4121A.23.10.000 | հատ | 750000 |
| 4 | պ/մաս | У1230.04.002 | հատ | 90000 |
| 5 | պ/մաս | ДШ36x3.5.4КР | հատ | 1000 |
| 6 | պ/մաս | У1230.04.003 | հատ | 140000 |
| 7 | պ/մաս | У1230.04.001 | հատ | 80000 |
| 8 | պ/մաս | У1230.04.006-05 | հատ | 45000 |
| 9 | պ/մաս | 7798.12x90 | հատ | 4500 |
| 10 | պ/մաս | 5915.12 | հատ | 700 |
| 11 | պ/մաս | У1230.04.004 | հատ | 5000 |
| 12 | պ/մաս | У1230.04.007-05 | հատ | 21000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 13 | պ/մաս | У1230.04.004-01 | հատ | 5000 |
| 14 | պ/մաս | У1230.04.004-02 | հատ | 5000 |
| 15 | պ/մաս | 4121A.01.15.150 | հատ | 12000 |
| 16 | պ/մաս | РВД 25-1000 | հատ | 9000 |
| 17 | պ/մաս | 4121A.01.15.100 | հատ | 12000 |
| 18 | պ/մաս | 4121A.01.15.250 | հատ | 12000 |
